

Տ. ՍԱՀԱԿ Ա. ՔԱՀԱՆԱՅ ՎՐԹԱՆԷՍԵԱՆ
(1969-1985) (1919-2005)

Աւագանի անունով՝ Յարէթ, ծնած է 1919-ին, Փորթ-Սայիտ, Եգիպտոս, Մոսսա Տաղցիներու վրանաքաղաքին մէջ:

Բնիկ Սուէտացի, Հաճի Հապիպլի գիւղէն, ուր անցուցած է մանկութիւնը եւ ուր իր նախնիքը ապրած են դարերով, մինչեւ 1939 Սանճաքի պարպումը:

Մէկ տարեկանին կը մահանայ հայրը՝ Պետրոս եւ մինչեւ տաս տարեկան կը մնայ մօրը՝ Մարիամի խնամքին ու ջերմ հոգածութեան տակ: 1931-ին, մայրը զինք կ'ուղարկէ Քեսապի Գերմանական որբանոցը՝ որ գիւղին մէջ անուս չմնայ, գրել-կարդալ սորվի ու «մարդ դառնայ»:

Երբ 1935-ին, որբանոցի նախակրթարանը կ'աւարտէ, ճակատագրի բերումով կ'ընդունուի Երոստաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի Ժառանգաւորաց Վարժարանը՝ որբանոցի տեսուչ, վերապատուելի Հէր Շնայտրի եւ Երոստաղէմի պատրիարք՝ Թորգոմ Արք. Գուշակեանի կարգադրութեամբ:

Եօթ տարի Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի դասաւանդութիւններուն հետեւելէ ետք, 22 տարեկանին շրջանաւարտ կ'ըլլայ որպէս նորընծայ սարկաւազ, բայց փոխանակ արեղայ ձեռնադրուելու, կը դառնայ քարտուղար, ուսուցիչ-ղպրապետ եւ ապա՝ քահանայ:

1942-1945, կը ծառայէ Անգլիական բանակին մէջ որպէս մեքենագիր-քարտուղար՝ Պաալպէք, Թըրպոլ, Պէյրութ եւ Քաթանա-Դամասկոս:

1951 Յունուարին, կ'ամուսնանայ Օրդ. Արմենուհի Քաթմարեանի հետ, Լաթաքիա, Սուրիա եւ հետագային, ամոլը կը բախտաւորուի երեք զուտրերով՝ Մարօ, Նորա եւ Ծովիկ:

- 1945-1963, կը գրադի ուսուցչութեամբ եւ զպրապետութեամբ:
- 1945-ին, Պէյրութի (Նոր Սիւ) Լուսինեան - այժմ Աքսոր Գասարճեան - Վարժարան
 - 1946-1947, Հայէպի (Սուրիա) Հայկազեան Վարժարան.
 - 1947-1954, Լաթաքիոյ Ս. Յակոբ Ազգային Վարժարան եւ
 - 1954-1963, Լառնաքայի (Կիպրոս) Ազգային Վարժարան:

3 Նոյեմբեր, 1963-ին, կը հրաւիրուի Միացեալ Նահանգներ եւ կը ձեռնադրուի քահանայ՝ Ուայթընզվիլի (Մէսէչուսէց) Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ՝ Թեմիս Բարեջան Առաջնորդ, Գերաշնորհ Տ. Հրանդ Արքեպիսկոպոս Խաչատուրեանի եւ խարտավիլակութեամբ՝ Տ. Արսէն Ա. Քահանայ Սիմէոնեանցի:

Տէր Հայրը, երկու տարի, 1963-1965, կը ծառայէ Ուայթընզվիլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ: Չորս տարի, 1965-1969, Շիքակոյի Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ մէջ: Իսկ տասնվեց տարի՝ 1969-1985, Ուաշինկթընի Ս. Խաչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ: 1969-1980, առանձինը հրատարակած է եկեղեցւոյ կիրակնօրեայ լրատու թերթիկը՝ «Մաշտոց»ը, ուր լոյս տեսած են քարոզներ, բանաստեղծութիւններ եւ գանազան յօդուածներ՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով:

Աշխատակցած է «Սփիւռք» գրական շաբաթաթերթին, «Հայրենիք» օրաթերթին, «Հայ Սիրտ» եւ «Կիլիկիա» պարբերաթերթերուն եւ Առաջնորդարանի “Outreach” ամսաթերթին: Հրատարակած է «Մոսսա Տաղէն Մինչեւ Արարա» գիրքը եւ ունի 7-8 անտիպ գործեր:

Իր ամբողջ կեանքը նուիրած է ազգային-կրօնական ծառայութեան. եղած է Հ.Մ.Ը.Մ.ական եւ շարքային դաշնակցական: